

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Նոր կեանքէն» հեռուել խիստ շահեկան վիճակագրութիւնը կ'արտատպենք, գիտնալով թէ ՏԻԳՐԻՍԻ ընթացողները կը շահագրգռուին Հայաստանի տնտեսական վիճակին վրայով եղած այդպիսի պաշտօնական տեղեկութիւններով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Հայերը և Իսլամները

Էրզրումի անգլիական հիւպատոս Պ. Մէստրի, 1898ին էրզրումի տնտեսական կացութեան մասին պատասխան տեղեկագրին մէջ կ'ըսէր.

«Նշաններ կան ցոյց տուող թէ վաճառականութիւնը, որ իսլամներուն ձեռքը անցած էր, նորէն քրիստոնեաներու ձեռքը անցնելու վրայ է» Մեզի համար խիստ շահեկան էր անգլիական հիւպատոսներուն նախորդ տեղեկագրիներուն մէջ փնտռուել ծագումը և ընթացքը այն կերպարանափոխութեան որով Հայերը տնտեսական հրապարակին վրայ իսլամին առջեւ պահ մը բռնի տեղի տալէ յետոյ, քիչ քիչ նորէն ձեռք կը բերէին իրենց տնտեսական գերակայութիւնը յամառութեամբ և խելքով:

Դժբաղդարար անգլիացի հիւպատոսները ամենուրեք նշանակած չեն այդ իրողութեան զանազան շրջանները: Ինչ որ սակայն զէս ու զէն կը գտնենք իրենց տեղեկագրիներուն մէջ, կրնայ բաղդատական գաղափար մը տալ Հայաստանի ամեն կողմը պատահած նմանօրինակ երեւոյթներուն վրայ:

Էրզրումի հիւպատոսը Պ. Կրէյվը, 97ի մասին խօսելով, կ'ըսէր թէ «վաճառականութիւնը մեծ մասամբ քրիստոնեաներէն իսլամներուն ձեռքը անցած է»: Ինչպէս ըսինք, 98ին այդ կացութեան փոփոխութեան նշանները սկսած են երեւնալ:

Սարգսի կացութիւնը 97ին հեռուեալն էր. «Այս նահանգին առեւտուրը 97ին քիչ շատ վերականգնուած ցաւ: Թիւրք վաճառականներ հիմակ յաջորդած են բազմաթիւ հայ վաճառականներուն որոնց դրամազուրկը փնտցաւ խառնութեանց ատեն և որոնց ձեռքն էր գլխաւորաբար Մամուրէթ-Իւլ-Միդիդի վաճառականութիւնը: Այս երեւոյթը շատ ակնհայտ է Սարգսի և Մալաթիայի, որոնք նահանգային առեւտրական գլխաւոր կեդրոններն են: Արարկի մէջ միայն Հայոց դործերը շատ բանուկ են, չնորէն ուստի նահանգ վերականգնեցաւ անգլիական նպաստի դրամով: Դուրսէն բերուած մանած ու տէգ կեանք խնամքով բաժնուեցան, և արհեստը քանակելի կերպով վերսկսաւ ընդ հսկողութեամբ Սարգսիի ամբարիկեան միսինարութեան նախագահ Տր. Կէյքսի, որուն յանձնուած էր չքաւոր Հայերուն ի նպաստ Անգլիոյ մէջ հաւաքուած գումարներուն բաշխումը այստեղ: Պ. Կէյքսի անցող-ըտող յարատեւութեան և խելացի մատակարարութեան շնորհիւ, այդ գումարները, չքաւորներուն անմիջական պէտքերը հոգալէ զատ, բաւական եղան Արարկի, Մալաթիոյ, Սարգսիի գիւղերուն մէջ և այլ ուր քանդուած հարկաւոր տուներ վերաշինելու: Արարկիի մէջ ուստայնականութիւնը արագօրէն առաջ երթալու վրայ է, և ամեն պատճառ կայ յուսալու թէ քաղքին հայ բնա-

կիչները երկու երեք տարիէն մեծապէս պիտի դարմանեն ջարդերուն բերած աւերները: Նմանօրինակ արտարագործութիւն մը Ալին մտցուած է Հայաստանի Բարեկամներուն ընկերութեան ձեռքով, տնանկ և անոք որբեւարներուն միջոց տալու համար որ իրենց ու իրենց զաւակներուն տպուատը ճարեն, և լաւ յաջողութիւն մը կը յուսացուի: Բացի Արարկիէն սակայն, առեւտուրը դեռ դարձած է նահանգին ամբողջ քրիստոնեաներուն մէջ. և Ալին, Չըմչկածագ, Սողաթ, Ասեման և Չարսանագ, թէ՛ քրիստոնեայ թէ՛ թիւրք ու է գործ ըրած չուենին:

Սարգսիի 98ի տեղեկագրին մէջ հիւպատոսը ու է տեղեկութիւն չի տար Հայերուն և իսլամներուն փոխադարձ գրքին մասին առեւտրական հրապարակին վրայ:

97ին Բաղէշի կացութիւնը հեռուեալն էր. Բաղէշ քաղաքը իբր 30,000 բնակիչ ունի, երկու երրորդը քրիստոնեայ էր, և մէկ երրորդը հայ: Բաղէշ առեւտրական կեդրոն մըն է, որովհետեւ ապրանքները կուգան հոս և ապիւղ կը շրջուին նահանգին միւս կողմերը, բացի Սղոթէն և Մուշէն որոնք նահանգին երկու միւս քաղաքներն են: Բաղէշ քաղաքին մէջ մեծաքանակ ներածող հայ վաճառականներուն թիւը 10 է, իսկ իսլամներունը՝ 12, որոնք միջին հաշուով Հայերէն քիչ քիչ աւելի հարուստ կը կարծուին: 95ի ջարդերէն առաջ, մեծաքանակ ներածող 13-14 հայ վաճառական կար, ու հիմակուանէ պակաս իսլամ այդ թուականին բաղդատուած, իսլամ վաճառականները հարստացած են և Հայերը աղքատացած: Մեծաքանակ ներածողներուն գլխաւոր ապրանքները խաներու մէջ պահուած են, և ջարդերուն տանն անոնց ձեռք չըպցուեցաւ: Շուկան, առանց հաշուելու 6 փուռ և 30 մտավաճառանկը, իբր 500 պղտիկ խանութներէ կը բաղկանայ, որոնց կէսը նպարեղէն ու բէգրու կը ծախեն, իսկ միւսները բամբակեղէն, լամպար, ամաններ, երկաթեղէն և այլն: Նպարանոցները միւս իսլամներուն ձեռքը եղած են: Միւս խանութներուն մեծ մասը Հայերուն ձեռքն էին ջարդերէն առաջ, բայց անկից ի վեր իսլամները վարձած են և դրամաւած անոնց մեծ մասը: Հայերը սակայն քիչ քիչ իրենց հին դիրքը ձեռք բերելու վրայ են շուկային մէջ, ուր հիմակ 30 հայ խանութ կայ, մինչդեռ 96 ին 12 հայ մտացած էր միայն: Բաղաքին տուներուն դրեթ մէկ երրորդը ապակիէ պատուհանը ինչ է չեն գիտեր. իւզոտած թուղթ կը գործածեն ապակիի տեղի»

98ի տեղեկագրիներուն մէջ Հայերուն և իսլամներուն այս առեւտրական մրցման մասին նոր տեղեկութիւն մը չկայ: Բայց ընդհանուր կերպով խօսելով, պատճառ մը չկայ տարակուսելու թէ Սարգսիի, Մալաթիոյ, Բաղէշի մէջ, ինչպէս Հայաստանի ամեն կողմը, Հայերը հեռու գնացած են, ինչպէս կը հաստատուէ Էրզրումի հիւպատոսը իր շրջանակին մէջ:

Նիւ Եօրք Մինի մէջ կը կարգանք հետեւալը

ՍՈՒԼՔԱՆԸ ՇԱՏ ՄՏԱՀՈՂ Է Չարին նպատակն է ուրիշ դեռ պանասիորհուրդ մը կանչել Պալքանեան խնդրոյն համար

Փարիզի Փեթի ՊՈՒՆԻՆ Վիէնայի թղթակիցը հեռագրած է թէ Սուլ-

թանը ծանրապէս վրդովուած է այն լուրին վրայ թէ Չարը Պետութիւններէն ուրիշ դեռ պանասիական ժողով մը պիտի հրաւիրէ ուր Պալքանեան բոլոր խնդիրները յուզուին, ի մասնաւորի Հայ և Մակեդոնացի Գրիստոնէից վիճակը որոնք կը հարստահարուին թիւրքերուն կողմանէ: Սուլթանը, թղթակիցը կըսէ, ամէն ազդեցութիւն կը գործածէ Պերլինի և Վիէնայոյի դաշինքներուն մէջ որ Չարին այդ փափաքին իրականացումը արգելեն, և Գերմանիոյ աջակցութիւնը կակնկալէ:

Ս. Փեթրոսովի մէջ աւստրուրը հաստատուած է:

Լնտոն Թայմզ

Վիէնայի Փոլիթիք Գործափոնտէնը Ռուսական Հեղինակութեան վրայ հիմնուած կըսէ թէ թիւրքիւյն կողմէն ապաստանած Հայերը կրէտէ շրջուելուն լուրը բոլորովին անհիմն է, այս բանիս ամէնէն աւելի կը հակառակին կրէտացիք իրենք:

Ոստիկանութեան թիւը կրկին կրկնապատուած է Կ. Պոլիս: Նկատի առնելով որ երիտասարդ թիւրքերը Հայերուն հետ միասին գործելու համաձայնութիւն ունեցեր են:

Սաղաղութեան վեհաժողովը վերջացաւ, գրեթէ առանց էական արդիւնքի: անոր վրայով մեր ընդհանուր տեսութիւնը մնաց յաջորդ թիւերին, նիւթերու շատութեան պատճառով:

ԿՈՉ ՄԸ

ԻՋՄԷԻ ԵՐԻՏՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ

Մեր սիրելի ծննդավայրէն, դըրախաւաւա իջմէն, որ այժմ բըռնաւորին գաղանային արարքներովը աւերակ ու ամառի դարձեր է, սըրտաշարժ կոչ մը կ'ուզուի մեզի: Հաց չէ անոնց ուզածը ոչ ալ հանգերձ: Կրթասէր իջմէն իր մանուկներուն մտաւորական զարգացումին ի նպաստ մեզմէ նիւթական ձեռնտուութիւն մը կ'աղերսէ: Այս պերճաբոս դիմումին առջեւ անտարբեր գտնուելու անզգայութիւնը չունենանք:

Ա.Ն. ԿՈՉԸ

«Սիրելի Հայրենակիցներ» Մի մոռնաք ձեր ծննդավայրն իջմէն իր այս տառապանքի օրերուն մէջ: Գիտէք թէ ծանօթ աղէտներուն պատճառաւ հոս ինչ անկարագրելի աղքատութիւն կը տիրէ: այդ պատճառաւ Լուսաւորչականները երբէք չպրոց չունին, բոլորքականներն ալ արտաքին օգնութիւնով երբեմն կ'ուենան և երբեմն ոչ: Մեր որբերը գաստիարակուելու համար կը դիմեն Ամերիկեան ու Գերմանական որբանոցները որոնցմէ ոմանք կ'ընդունուին իսկ շատերը կը մերժուին և գիւղին փողոցները թափառելու կը դատապարտուին: Հանգանակութիւն մը կատարեցէք ձեր մէջ և դրամական նպաստ մը դրկեցէք որ կարենանք հաստատուն զպրոց մը պահել և կրթել մեր գաւազները, կրթել ու դաստիարակել մեր անտէր որբերը: Օղնութեան հասէք ձեր գիւղին մտաւորական զարգացմանը, որ երբ արտի օր մը հոս վերադառնաք՝ զայն զարգացած վիճակի մէջ տեսնելու ուրախութիւն ունենաք»

Այս կոչին կը հրաւիրենք Ամերիկայի մէջ գտնուող բոլոր իջմէցիներուն ուշադրութիւնը և կը խնդրենք ամեն ոք զրէ իմբաբարութեանս իր կարծիքը թէ ինչ ընելու ենք, որ մենք այդ նամակներուն վրայ հիմնուած հարկաւոր կարգադրութեանը ձեռնարկենք:

Գ. Պ. Չ.

ՏՈՒՆՆԻ ԱՐԿԱՍՏ ՄԸ

Պր. Պ. Գարրիէլեան Փէթրուրենէն կը գրէ—

Տիկին Պատմաճեան որ իւր 17 ամեայ Տերուհի դուստր հետ Սըմաթիէն ամիս մը առաջ հոս իւր որդւոյն քով եկած էր, իր դուստր հետ երկաթուղիի գծէն անցնելու պահուն շոգեկառքէն կը դարնուի, որը տուն բերուելով, քանի մը ժամէն մեռաւ:

Մարմինը պիտի ամփոփուի Պրուքլին Սետար կրով գերեզմանատան մէջ: յուղարկուորութեան արարողութիւնը պիտի կատարէ Փրոֆ. Կարապետեան:

Պրն. Պատմաճեան Հրապարակաւ իր շնորհակալութիւնը կը յայտնէ բոլոր անոնց որք վիճքը միտիարկու եկան:

ԳԱՂԹԱԿԱՆԱՑ ՊԱՐՃ ՕՓԻՍԻՆ ՄԷՋ

ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԻ ԽՆԴԻՐԸ

Նիւ Եօրքի պարճ օֆիսին մէջ նոր եկող գաղթական Հայերուն թարգմանի համար կառավարութեան կողմանէ պաշտօնի անցած էր Պ, արամ Գոնճակիւլեան, ստոր պաշտօնի անցնելէն ետքը տեսնուեցաւ որ սովորականէն շատ աւելի թնուով Հայեր ետ կը շրջուին. ևս ինծի Հայրենասիրական պարտք համարեցի այս ցաւալի իրողութեան պատճառը հասկնալ և տեսայ թէ յիշեալ Հայ թարգմանի ամէն գուրս բերուողի համար դրամ կը պահանջէ. և անոք որ չէինք. չեն գոհացուներ անոնց իրենդիրը անանկ երեւոյթի մը կը վերածէ որ ևս կը շրջուին. ևս գաղթի և այս խնդրոյն վրայ պարճ օֆիսին վերատեսուչը տեսայ և ինչպիսի իրեն պարգեցի. նա ինծմէ վիճակը ուզեց ըսածներս հաստատելու համար, ևս լսեր էի որ մէկը պարոն Յակոբ Ղուսիկեանի միջոցաւ գումար մը տուած էր պրն արամ գոնճակիւլեան որ իր ստորը գումար հանէր, վերատեսուչը տիթիքթիվ մը ինծի հետ դրաւ, գացինք Պ, Ղուսիկեանը տեսնելու, որ իր այդպէս բան մը ըրած ըլլաւ բոլորովին ուրախ և անանկ կերպով մը տիթիքթիվը իրանութէն դուրս հանեց որ հասկցաւ թէ՛ բան մը կայ. վերատեսուչը այս բանէն չ'զուհանալով ինծմէ ուրիշ վկայութիւններ ուզեց որուն 6-7 անձերու հասցէները տուի, որոնց թիւիւնով բոլորովին համապատասխան թէ՛ մեր ըսածները իրաւացի էին և ատոր վրայն արամն պաշտօնանկ ըրաւ:

ասկէ ետքը Հայերը կրնան անվախ կերպով գալ և ապահովապէս դուրս ելլել, եթէ երկրին գաղթականական օրէնքին զէմբան մը չունին:

Յ, ԳԱՂՃԵԱՆ

«Տիգրիս»ի 86րդ թուոյն մէջ Լօրէնսի վերակողմեալ Հնչ. մասնաճիւղին կողմէն գրուած յայտարարութեան մը մէջ՝ Գաղանկականներու «ոմանց» պատուոյ վրայ յարձակումներ եղած էր. կ'օմիտէս նախաձեռնութիւն մէն մի ընկերով յեղափոխական բարոյական նկարագրի և պատուոյ կը պահանջէ որ հաստատուէ նամակի Գաղանկականներու «ոմանց» կողմէ գաղտնիքը, նաև ծանօթ յայտարարութիւն հրապարակու կը յայտարարէ թէ Առաքել Հ. Սարգիսեանը (Արարկիբոյ) բնաւ Գաղանկական եղած չէ և չէ ալ:

Ի Գիմաց Հայ. Յեղ. Դաշ. Լօրէնսի Կօմիտէի

Ատենադպիր Ատենապետ
ՔԱՆԴԻՉ ՉՈՒԼՈՒՄ
Յուլիս 24 Լօրէնս

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Վ Ա Ր Բ Ե Ր ՈՒ Բ Ա Ր Բ Ե Ր

(Ամերիկայի Հայոց Կեանքէն)

Ուսումնասիրուած յատկապէս ՏԻԳ-ՐԻՍԻ ընթերցողաց համար:

Ա.

Նիւ Եորքի աննշան փողոցներէն միոյն մէջ Հանդիպեցայ իրեն. բայց, հազիւ կրցայ ճանչնալ այն դէմքը որ զեռ երեք տարի առաջ ազնիւ և ըզգայուն հոգւոյ մը յատուկ ցոլքերն կ'արտաբայէր:

Բարեկեցի:

Գլուխը միայն շարժեց ի պատասխան:

Որպիտե՞ր ձեր հարցոցի:

Չուզեց պատասխանել, զիս չը ճանչնալ կեղծեցով:

Անունը տուի վստահացնելու համար զինք թէ խարուած չէի կրնար ըլլալ:

Ցնցուեցաւ:

Ցնցումը կեղծ էր անշուշտ, բայց դէմքին գունաթափուցումն այնպէս մակարեքեցի թէ թերեւս իրեն հետ խօսելու յամառութիւնս, ինքզինքը ինձմէ ազատելու ունայն փորձին յաղթած էր վերջապէս:

Հառաչ մը և երկու կաթիլ արցունք բաւական եղան զիս համոզելու թէ վեց տարուան բարեկամս որուն նկատմամբ երեք տարիէ ի վեր որոն մը չէի գիտեր. նման Ամերիկայի մէջ նոր եկող կարգ մը Հայ երիտասարդներու, տխուր եղբերակութեան մը ողբալի զոհն եղած էր:

Ի՞նչպէս ես, ի՞նչ կ'ընես, կը գործե՞ս Հարցումներէս առաջին երկուքին ձեռքի՛ իսկ վերջնոյն՝ զԼիւի բացասական շարժումներով պատասխանեց:

Ինձ այնպէս թուեցաւ թէ տակաւին խօսիլ ուզելու չափ ուշաբերած չէր, զինքը այս թշուառ վիճակին մէջ գտած ըլլալէս զգուած:

Բաւե՛նք քիչ մը, ըսի, և խօսինք:

Ակամայ ընկերացած ինձ:

Մինչև մտադրած ճաշարանին դուռը, որը կը բացուէր կեդրոնական Նիւ Եորքի համեստ փողոցներէն միոյն վրայ, բառ մը անգամ չխօսեցաւ, թէ և ես կը ջանայի, անուղղակի գարձուածքներով, հասկցունել իրեն թէ իր ներկայ գիւրքը աշխարհիս մէջ ապրելու վիճակուողներու համար բացառութիւն մը չէր և թէ մարդ կեանքի դժնդակ պայքարին մէջ միշտ յաղթող Հանդիսանալ պէտք չէ սակեկալէ: Այդ պահուն յանկարծ...

Թրոյ ՍԻՐԱՆ (Շարունակելի)

ՍՏՍ ԵՐԿԻՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ՄԱՍԵՐՆ

Այս երկրի կառավարութիւն կազմող մարմիններն երեք զլիսուոր ճիւղի կը բաժնուին. օրէնդադրական (էճիսթիսթիս), դատական (ճուսթիս) և գործադիր (էքզիկիսթիս): Օրէնդարականն բոլորովին նոր օրէնք մը կը հաստատէ կամ նորը հնոյն տեղը գրաւելու համար խպառ կը ջնջէ հինը, Գործադիրը օրէնքներն ի կիր կ'արկանէ, իսկ դատական մարմնոյն պատժուն է հսկել թէ արդե՞ք նորահաստատ օրէնքներն համաձայն են սահմանադրական օրինաց ոգոյն և թէ արդե՞ք գործադիր մարմինն զայն ճշդութեամբ ի գործ կը դնէ:

Օրէնդարական և գործադիր մարմինները կը նստաւն ժողովրդի ուղղակի քուէից մեծամասնութեամբ,

իսկ դատական մարմնոյ անդամք կը նստաւն կառավարիչէն կամ նախագահէն և կը վաւերացուն օրէնդարական ժողովոյ անդամաց քուէից մեծամասնութեամբ:

Այս երեք զլիսուոր մարմիններ գոյութիւն ունին թէ քաղաքի, թէ նահանգի և թէ ընդհանուր երկրի կառավարութեան մէջ: Քաղաքն ունի իր մարմիններն անոնց զլուր ունենալով քաղաքագետն (մէյըր) իրաւունք ունի իր քաղաքի ժողովրդին համար օրէնքներ հաստատել պայմանաւ որ նահանգի սահմանադրական օրինաց ոգոյն հակառակ չըլլայ: Ամեն նահանգ ինքնին անկախ կառավարութիւններն իրեն զլուր ունենալով կուսակալն (կըլըրնըր), հոն ալ տեղական պահանջներուն համաձայն օրէնքներ կը դրուին, պայմանաւ որ անոնք համապատասխան ըլլան Միացեալ Նահանգաց ընդհանուր սահմանադրութեան օրինաց: Պիտի գտնենք թէ այս երկիրը իւր մէջ կը պարունակէ բազմաթիւ անկախ կառավարութիւններ որոնք միեւնոյն տան ամբողջը միասին կը կազմեն Միացեալ Նահանգ Ամերիկայի որ իրեն զլուր ունի նախագահը: Թէ ինչպէս այս բազմաթիւ կառավարութիւնները կրնան անկախ ըլլալ միեւնոյն տան միացած ապրիլ իրենց կեդրոն ունենալով Վաշինգթոնի կառավարութիւնը, ցոյց պիտի տանք յաջորդ Երեսնամեայ ՊեՏՐՈՍ Ա. ԿԷՈՂԻՆԿԵԱՆ Պօթոն: Յուլիս 30.

**

ԻՆՉՊԵՍ ԲՆԱՆԱԼՈՒ Է:

Ֆրանսացի բնագէտի մը հետաքրքրաշարժ պատճառներն

Անոնք որ իր և անուշ քուն չեն վայելող կրնան օգտուել հետեւեալ դիտողութիւններն կարգաւորով, որոնք իր հանգիստ քնանալու միջոց կամ դարման ֆրանսացի բնագէտ մը մի քանի գարմանալի փորձերու վրայ հաստատած է:

Այս դիտողութիւններն ամփոփուած են Գլուխն զէսի Սրեմուտք պառկելուն մէջ.

Այս խորհուրդը ծագած է բուսական թագաւորութեան մէջ տեսնուած զարմանալի երեւոյթներէն. Պարոն Մուսէ բնագէտն այն եզրակացութեան եկած է թէ երկրի իր առանցքին վրայ թաւալուած մեծ աղքեցութիւն ունի բոլոր բուսականութեան և նուազ աստիճանով մը կենդանեաց վրայ:

Երկրի թաւալումէն յետոյ եկած զօրութիւնն որ կեդրոնախոյս զօրութիւն կը կոչուի, կը չեզոքանայ կեդրոնադուրութեամբ և թէ երկրին տան և եօթն անգամ աւելի արագ դառնայ այն տան կեդրոնախոյս զօրութիւնն բոլորովին պիտի յաղթէր կեդրոնադուրութեան և բոլոր երկրի վրայ գտնուող մարմիններն պիտի ցնցուէին ու գուրս նետուէին: Կեդրոնախոյս զօրութիւնն ամենարարձր աստիճան հասարակածին վրայ է, որովհետեւ այն շրջանակն որով երկիրն կը դառնայ աւելի մեծ է հոն քան ուրիշ որ և է տեղ. այս պատճառով կեդրոնադուրութիւնն հասարակածին վրայ կը նստուի. և մարմին մը հոն 20 ին մէկ աւելի կը կռնէ քան ինչ որ կը կռնէ բեւեռներուն վրայ. նրկատուած է գետերու մէջ Հիւսիսէ հարաւ հասող ջուրերն զէսի ձախ կամ Արեւելք կը ծռին և այս յառաջ կուգայ կեդրոնախոյս զօրութեամբ ճիշդ նոյն պատճառաւ է որ Համակեդրոն գոտիներու մէջ գտնուող ծառեկազդերուն Արեւելեան մասերն աւելի մեծ են քան միւս մասերն:

Յիշեալ ֆրանսացի բնագէտի ծառերու վրայ ըրած հաղարարութիւններով, վերջերս հաստատուած է թէ բոլոր ծառերն ձուածեւ կոճկեր ունին և թէ անոնց մեծագոյն կեդրոնն միշտ դէպ Արեւելք կը գտնուի: Բնագէտն փորձով կը հաստատէ թէ կեդրոնախոյս զօրութիւնն կ'ազդէ ծառերու մէջ եղած բուսակալութիւն ճիշտ այնպէս ինչպէս կ'ազդէ գետերու մէջ գտնուող ջուրին. այսպէսով ծառերու արեւելեան կողմն աւելի կ'աճի ու կը մեծնայ, հետեւաբար բնական է հետեւեալ թէ այս զօրութիւնն որոշեալ չափով մը կ'ազդէ նաև մարդկային մարմնոյն մէջ հոսող արեան վրայ:

Եզրակացութիւնն հոն հասած է թէ երբ մարդ գլուխը դէպ արեւմուտք պառկած դիրքի մէջ կը գրտնուի, կեդրոնախոյս զօրութեան ազդեցութիւնով արեւը կը խոտորի դէպի արեւելք և կը հոսի դէպի ոտքերը հետեւաբար իր քունն ալ պիտի ըլլայ անվրդով և անուշ:

1899 Յուլիս 28 Ս. ԹԱՇՃԵԱՆ (Ուսանող)

Ս.ՉԳ

Հ. Ե. Թանգարանի Միութեան 10րդ Տարեկարծի Դաշտ. Հանդէս Միութիւնս իւր 10րդ տարեկարծի դաշտային հանդէսը պիտի կատարէ Օգոստ. 13ին ի Շէֆֆըրս Փառք, Ուէսթ Հոպքըն Ն. Ճ: Հանդէսը պիտի սկսի առաւօտետն ժամը 9ին, յորում տեղի ունենալիք ամէն խաղեր և ուտելիքներ զուտ հայկական պիտի ըլլան: Ամեն ջանք ի գործ դրուած է խաղերը անվնաս և զուարճալի ընելու և ուտելիքները ծախս ծախելու, երկսեռ ազգայինք սիրով կը հրաւիրուին մեր սրտին մօտ եղող սոյն հանդէսը վայելելու համար: Միութեան բոլոր անդամները մասնաւոր իր մասնաւոր հրաւէր ընդունելով թող Հաճին անպատճառ ներկայ գտնուիլ, ուր տեղի պիտի ունենայ նաև ընդհանուր անդամական ժողով, պիտի ատենախօսէ Տ. Սարկաւազեան: Մտից դիրք 10ը սէնթ է, սոմնակ կը վաճառուի ամեն հայ՝ ճաշարաններու մէջ և թանգարանը 145 իսթ 23րդ փողոց: Հոպքընի կամ Ռուարքըրտի կառքերը ուղղակի պարտիզին առջև կ'երթան, Հարցուցէք գօտաբեք օրին, Շէֆֆըրս Փառք: ԽՆԱՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՎԱՐՈՒ

Յառաջիկայ Կիրակի (6 Օգոստ.) Վարդավառի տօն է: Հանդիսավայր Ս. պատարագ պիտի մատուցուի և պիտի վերսկսի եկեղեցական պաշտամունքը շարունակուել կանոնադրական Ս. Ոսկերիկան Եկեղեցոյ մէջ: Այս առթիւ յատկապէս հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ողբացեալ Գեր. Տ. Վաղինակ Վարդապետի, ինչպէս նաև բոլոր Հայ ննջեցելց հոգեոյն համար:

Կ'ահնկապէս որ ամեն ճշմարիտ կրօնասէր և անկեղծ Հայ փութայ ներկայ գտնուի սոյն կրօնական պաշտաման և հոն լսել թէ ի՞նչ ըսել է ՎԱՐԴԱՎԱՐՈՒ:

Թեմակալ Հովիւ Նիւ Եորքի, ԽՆԱՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ Կ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

ԱՆԳԼԻՍՏԻ ԳՐՊԱՆԻ ԲԱՌԳԻՐԳ

«Մենտոր Անգլիարէն Լեզուի» գրպանի համար շինուած անգլիարէնէ հայերէն և հայերէնէ անգլիարէն բառգիրքը որ կէս տօսարի կը ծախուէր այժմ խմբագրութեանս քով կը վաճառուի հասար 25 սէնթի:

Իշխան Գուրտոն Լուսինեանի բառգրքէն քաղուած բառական շատ գործածական խօսակցութեան ոճեր և բառեր կը պարունակէ:

Ս.ՉԳ

Տեղւոյս ազգայիններէն Տ. Պ. Շմառնեան «Տիգրիս» ի ջերմ համակիրը՝ և անոր տարածման ցանկացող ըլլալով, յանձն կառնէ թերթին գինն մէկ երրորդը ինք վճարել, եթէ քաղաքիս Հայերէն բոլորովին նոր բաժանորդ գրուող կամ ձեռքէ զընողներ ըլլան, որով տարեկանը մէկ տօյարի և հասար երկու սէնթի կիջնէ: Ուստի թէ՛ բաժանորդ գրուիլ՝ և թէ՛ հատով գնել փափաքողները, կրնան ինձ գիտել:

Մանչեսթր Նիւ Հէմշիր Մ. Արոյեան

Ս.ՉԳ

42րդ փողոցի Ս. Բարթողիմէոս եկեղեցոյ մէջ նախապէս կազմուած Հայկազեան Կաճառը տեղափոխուած և աւելի հոտատու հիմերու վրայ վերակազմուած ըլլալով՝ իւր մարդութիւնները կը շարունակէ ի թիւ 498 3րդ Ալիւ 33 և 34րդ փողոցի մէջտեղ, վերին յարկ, ամեն Ուրբաթ իրիկուններ ժամը 8էն 10ը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Կը փնտրուին հետեւեալները: Կարնեցի Տիգրան Գրիգոր Տապաղեան անուն երեսուն և հինգ տարեկան միջնահասակ անձը, արուեստը դերձակ էր, հինգ տարի առաջ Կ. Պոլսի պանդխտած և 1897 թուականէն ի վեր անյայտացած է:

Նոյնպէս Բաղէշի Դարիպան Գրոյեան անուն մէկը, որ քսան և մէկ տարի առաջ Կարնոյ մէջ ամուսնացած է եղբի թագուհի Ղասապ Շահօեան անուն կնոջ մը հետ, ամուսնութենէն վեց ամիս յետոյ մեկնելով Կարնէն՝ մինչև ցարդ երևան ելած չէ:

Նոյնպէս ի Չմշկածագ ծնեալ և ի Կաղարի գիւղ սրբաբարձ Յակոբ Մ. Ուղղունեան անուն կարճահասակ, խաժակն և թխաղէմ անձը հինգ վեց տարիէ ի վեր անյայտացած է: Ուստի վերոյիշեալ երեք անձանց ուր և ուղ կամ մեռեալ լինելը գիտցող ազգայիններէն կը խնդրուի, որ Հաճին ընդ փոթ տեղեկութիւն տալ Առաջնորդարանիս հետեւեալ հասցէի:

Յով. Եպ. Սարաճեան 64 Larnel St. Worcest. Mass.

ՄԻՀՐԱՆ ԽԱՐԲՈՒԹԻՒՆՆ ԵՐԵՔ ՄԱՍԵՐՆ

Մեր տան սեղանաւորական ճիւղը՝ իր ձեռամբ դրամ զրկողներէն գնահատելի կերպով քաջախիտաբար պարտք կը սեպէ յայտարարել թէ մենք ես պէտք եղած գոհողութիւնը չենք զընացած գործին միշտ ապահով միջոցներ յառաջ բերել, որպէս կ'ապացուցանէ մեր անցեալ տարիներու գործունէութիւնը: Հայ ժողովրդեան և մասնաւորապէս մեր տան անձանութիւններուն իրական վստահութիւն տալու համար պէտք է յիշել թէ՛ ՅԱՐԲՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՂՐԱՐԳ ԽԱՐԲՈՒԹԻՒՆՆ ԵՐԵՔ ՄԱՍԵՐՆ տան՝ երկրին մէջ ունեցած առաւել քան 10,000 Օամ. ոսկույ անշարժ ստացուածքը իր սոյն փոխադրի գործոյն երաշխաւորութիւնն է, յաշտ անոնց որոնք կուզեն դրամներ վստահել միջոցով զրկել: Ուստի կը յուսանք թէ Հայ Հասարակութիւնը չպիտի վարանի իբրև ապահովագոյն միջոցը՝ մեր ձեռամբ զրկել իւր դրամը, որ կրնանք փոխանակաբար տալ Նարբերդի, Տիգրանապոլի, Քղիի, Բալուի, Բերքիի, Մալաթիայի, Սևաղի, Կ. Պոլսի, նաև Տաճ, բոլոր քաղաքաց համար: (Ինձ դրամ զրկողներն ապահովագրութեան համար՝ Նէշընըլ Պաքի չէք և կամ մընի օրտըր զրկելու են):

Հայրենիքի մէջ ո՛ր է գործ տեսնելու կամ գործադրման օգնելու համար՝ պատրաստ եմ եղբորս Թարութիւն էֆի ձեռամբ կատարել տալ: Ե Հեռագրով և նամակով դրամ և կամ նաւային թիքէներ կրնամ զըրօ կել Մարսիւնայ:

